ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1951 Общественные науки

Ե. ԽԱԼԵՅԱՆ — «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ»

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակություն, Երևան, 1950 թ.

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ՝ «Նյութեր Հայրենական Մեծ պատերազմի պատմության» սերիայով լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու Ե. Խալեյանի «Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանն» գիրքը, նվիրված գերմանա-ֆաշիստական դավաճանների դեմ մղված Հայրենական Մեծ պատերազմում ցուցաբերած իր սխրագործություններով անմահ փառքի արժանացած հայ ժողովրդի խիզախ զավակ Հունան Ավետիսյանի կյանքին։

Գիրքը բաղկացած է երեք բաժնից։ Առաջին բաժնում հեղինակը մանրամասնորեն ընթերցողին ծանոթացնում է Հունան Ավետիսյանի կենսագրության հետ, կանգ առնելով հատկապես նրա մարտական սխրագործությունների վրա։ Երկրորդ բաժինը նվիրված է հերոսի հիշատակի հավերժացմանը, իսկ երրորդում զետեղված են այն փաստաթղթերը, որոնք կապված են մարտական գործողությունների հետ։

Մինչև սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում, աղքատությամբ և զրկանքով լի իր կյանքը քարշ էր տալիս նաև Ղափանի շրջանի Մավ գյուղի չքավոր բնակիչ Մկրտիչ Խաչատուրի Ավետիսյանը, որն օրն ի բուն աշխատում էր, որպեսզի մի կերպ պահպանի իր տաս շնչից բաղկացած ընտանիքի գոյությունը։

Աշխատավորների, այդ թվում նաև Մ. Ավետիսյանի տնտեսական և իրավական գրությունը արմատապես փոխվում է, երբ Հայաստանում հաստատվում է սովետական իշխանություն։ Սովետական իշխանությունը, բոլշևիկների պարտիան Հայաստանի աշխատավորներին տվին խաղաղություն, ազատություն, ստեղծելով նրանց համար աշխատանքի և բարվոք կյանքի պայմաններ։

Փոքրիկ Հունանը ստանում է ուսում, դաստիարակվում Լենինյան Կոմերիտմիության շարքերում, դառնում Սովետական Հայրենիքին նվիրված, աշխատասեր և ազնիվ քաղաքացի։

Կարմիր Բանակի շարքերում իր պարտադիր ծառայությունն ավարտելուց հետո Ավետիսյանը վերադառնում է հայրենի գյուղը և աշխատանքի անցնում կոլեկտիվ տնտեսության մեջ որպես բրիգադիր։ Ինչպես կոլտնտեսության բրիգադիրի իր պարտականությունների կատարման ընթացքում, այնպես էլ ընկ. Ա. Ի. Միկոյանի անվան կոնսերվտրեստի երրորդ պտղարուծական սովխոզում,—ուր նա աշխատանքի էր ընդունվել 1939 թվականին իր մի քանի համագյուղացիների հետ միասին, Հունանը իր ժրաջան ու ազնիվ աշխատանքով միշտ գտնվում էր առաջավորների շարքերում։

Գերմանա-ֆաշիստական դավաճանների կողմից մեր սոցիալիստական Հայրենիքի վրա կատարված ուխտադրուժ հարձակումից հետո, սկսվում է նոր ժամանակաշրջան։ «Ամեն ինչ հաղթանակի համար» լոզունգը դառնում է սովետական մարդու աշխատանքի և պայքարի ուղենիշը։

Հունան Ավետիսյանը, Սովետական Հայրենիքի պաշտպանության անմար գիտակցությամբ, 1941 թ. օգոստոսին թողնում է թիկունքի աշխատանքը և մտնում է Կարմիր Բանակի շարքերը։ Կարմիր Բանակի հայկական զորամասերից մեկում մոտ մեկ տարի լրացնելով իր ռազմա-քաղաքական դիտելիքները, նա պատրաստվում է դալիք մարտերին։

Հեղինակը, քաղվածքներ բերելով Հունան Ավետիսյանի կողմից իր հարազատներին գրված նամակներից՝ ցույց է տալիս ապագա հերոսի սովետական վառ հայրենասիրությունը և քաղաքացիական պարտքի կատարման նրա պատրաստակամությունը։ Հիշելով Կարմիր Բանակի շարքերում իր ստացած ռազմական դիտելիքների անգնահատելի նշանա-

կությունը, Հունանը գրում է. այդ բոլորը «ինձ կոփեցին և սովորեցրին բանակում կանգ չառնել ոչ մի դժվարության առաջ։ Մարտական երթի ժամանակ առաջինն եմ, հրաձգության մեջ հետ չեմ ոչ ոքից» (էջ 15)։

Ռազմաճակատ մեկնելուց առաջ Հունանի գրած մի ուրիշ նամակում կարդում ենք. «Մեկնում եմ ճակատ, գիտցած եղեք, որ ձեզ ամոթով չեմ թողնի... Ես երդվեցի՝ պատվով ու սրբությամբ կատարել իմ պարտքս հայրենիքիս առաջ, Պարտիայի և հայր Ստալինի առաջ» (նույն տեղում)։

1942 թվականի օգոստոսի 7-ին ռազմաճակատ է մեկնում այն զորամասը, որի ստորաբաժանումներից մեկումն էր Հունան Ավետիսյանը։ Կովկասի պաշտպանության հերոսական օրերն էին։ Հիտլերյան ավազակային հորդաները ձգտում էին խցկվել Կովկասի խորքերը, մտնել Անդրկովկաս։ Կովկասը և Անդրկովկասը պաշտպանող զորքերի առաջ դժվարին, բայց պատվավոր խնդիր էր դրված՝ կտրել հիտլերյան ավազակների ճանապարհը դեպի նավթային շրջանները, դեպի Անդրկովկաս, ոչնչացնել նրա կենդանի ուժն ու տեխնիկան, գլխովին ջախջախել և դուրս քշել նրան մեր հայրենի հողից։

Հեղինակը պատմում է հայկական միավորման մարտական ստորաբաժանումներից մեկի կազմում գործող այն դասակի մարտական գործողությունները, որի հրամանատարի օգնականն էր ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը։ Հրամանատարության մարտական առաջադրանքները Հունան Ավետիսյանը իր դասակով կատարում էր գերազանց։ Մարտական գործողությունների մեջ նա քաջ էր, անվախ, ճարպիկ ու հնարագետ, ինչպես այդ երևում է գրքում բերված բազմաթիվ փաստերից։

Կովկասի պաշտպանության լարված օրերին ռազմաճակատ է հասնում հայ ժողովրդի պատմական նամակը, ուղղված իր ճակատային զավակներին։ Նամակը մեծագույն խանդավառություն է առաջացնում մարտիկների մեջ։ Նրանք երդվում են պատվով կատարել ժողովրդի նակազը, չվերադառնալ տուն, մինչև չոչնչացվի վերջին հիտլերականը։

1943 թվականի օգոստոսի վերջերից Հայկական միավորումը պաշտպանության նոր հատված է գրավում Նովորոսիյսկ քաղաքից հյուսիս-արևելք ընկնող անտառապատ լեռների շրջանում, գերմանական «կապույտ գիծ» կոչված ամրությունների դիմաց։

Սկսվում են Նովորոսիյսկի և Թաման թերակղզու ազատագրման համար մղվող արյունահեղ մարտերը։ «Դոլգայա» լեռան ամրությունները գրոհող զորամասի մեջ էր Հունան Ավետիսյանի դասակը։ Թշնամու գրաված տեղանքը պաշտպանության համար շատ նպաստավոր էր։ Անհրաժեշտ էր ճեղքել խորը էշելոնացված, կրակային ուժեղ միջոցներով պաշտպանված ընդգիծը, որը գերմանացիները անվանում էին անառիկ «կապույտ գիծ»։ Մեր մարտիկներից պահանջվում էր հմուտ գործողություն, անվեհերություն և համառություն՝ հակառակորդին իր ընից դուրս շպրտելու և ջախջախելու համար։ Հրամանատարությունը ամենայն մանրամասնությամբ նախապատրաստում էր գրոհը։

Գրոհի նախօրյակին ստուգվում են յուրաքանչյուր ստորաբաժանմանը առաջադրված խնդրի իրականացման նախապայմանները։ Հարձակումից երեք օր առաջ, հրամանատար Ն. Սաֆարյանը, անձամբ գալով առաջավոր խրամատները, խոսակցություն է ունենում նաև հմուտ ռազմիկ Հունանի հետ։

Այդ մասին հրամանատար Սաֆարյանը գրել է. «Երբ ես սեպտեմբերի 16-ի գրոհից առաջ շրջում էի ստորաբաժանումները, մոտենալով ամենակարևոր նշանակություն ունեցող Դոլգայա բարձունքի հյուսիսային լանջի պաշտպանության գծին, որտեղ թշնամին ուներ ավելի ուժեղ ամրություններ, հարցրի վաշտի հրամանատարին, թե որ գրոհային խումբն է գործելու այս ուղղությամբ, նա պատասխանեց. «Ամենաուժեղ գրոհային խումբը, դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Ավետիսյանի ղեկավարությամբ», և նրան ներկայացրեց ինձ, գա Ավետիսյան Հունանն էր... Նա ինձ վրա բացառիկ տպավորություն թողեց. նա շատ լավ էր իմանում թշնամու դասավորությունը և իր մարտական բոլոր խնդիրները» (էջ 39)։

Նախքան հարձակումը, գնդի հրամանատարը, ուսումնասիրելով վաշտի հարձակման ուղղությունը, հրահանգում է առաջին հերթին գրավել հակառակորդի այն ԴՋՕՏ-ը, որը համարվում է «Դոլգայա» բարձունքին տիրելու բանալին։ Այդ ԴՋՕՏ-ի ուղղությամբ շարժվելու էր հենց առաջին դասակը Հունան Ավետիսյանի գլխավորությամբ։ Հունան Ավետիսյանը նախապատրաստվում է գրոհին։ Նա վաշտի հրամանատարի հետ միասին որո-

-ում է ստորաբաժանումների շարժման ուղղությունը, ընտրում է գրոհային խմբի համար մարտիկներ և իր գլխավորությամբ անցնում է խնդրի կատարմանը։

Հեղինակը մանրամասն նկարագրել է գրոհի ամբողջ ընթացքը։ Գրոհը նշանակված էր սեպտեմբերի 16-ի առավոտյան ժամը 7-ին։ Սեպտեմբերի 15-ին, գիշերով, գրոհային դասակը Հունան Ավետիսյանի գլխավորությամբ շարժվում է դեպի հակառակորդի ամրությունները։ Հմտորեն անցնելով ականապատված տեղանքը, դասակը խրամատավորվում է թշնամուն շատ մոտիկ մի հարմար և նրա համար աննկատելի վայրում և սպասում ազդանշանի։

Հունան Ավետիսյանի և նրա մարտական ընկերների հիշողության մեջ թարմ ու վառ էր մեծ զորավար, Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի 1943 թվի սեպտեմբեր 8-ի հրամանը, որտեղ խոսվում էր ռուս մեծ ժողովրդի դավակ Մատրոսովի անմահ սխրագործության մասին, Մատրոսովի, որը իր մարմնով փակեց թշնամու ԴԶՕՏ-ի հրակնատը։ «Ընկեր Մատրոսովի մեծ սխրագործությունը,—ասված է այս հրամանում,— զինվորական քաջության և հերոսության օրինակ պիտի ծառայի Սովետական Բանակի բոլոր ռազմիկների համար»։

Սեպտեմբերի 16-ի առավոտյան ժամը 7-ին ստորաբաժանումներին հարձակման համար տրված ազդանշանը ոտքի է բարձրացնում Հունանի մարտական խմբին։ Ճարպիկ, կարճատև ոստյուններով խումբը շարժվում է դեպի բուրձունքն ի վեր, ճանապարհին ոչնչացնելով իր առաջընթացը խանգարող թշնամու ԴԶՕՏ-ը իր անձնակազմով։

Սակայն խմբի առաջխաղացումը կասեցնում է թշնամու մյուս ԴԶՕՏ-ից տեղացող կրակը։ Մարտը հետզհետե սաստկանում է։ Այդ լարված իրադրության մեջ Հունանը անմիջապես կողմնորոշվում է, պետք է շրջափակել և ոչնչացնել թշնամու այդ բունը նա։ Նա անում է համապատասխան կարգադրություններ և ինքը՝ նռնակներով զինված, սողալով մոտենում է ԴԶՕՏ-ին, բայց դեռ չհասած, ծանր վիրավորվում է։ Չնայած Հունանին հետևող մարտիկի դդուշացումներին, Հունանը, արնաքամ, արհամարհելով ցավերը, ընդհուպ մոտենում է ԴԶՕՏ-ի հրակնատին, կողքից ձեռքն առաջ մեկնելով՝ բռնում է դուրս ցրցված խոշոր տրամաչափի ղնդացրի փողը, մի քանի անգամ շարժում է այն, որպեսզի փոխի կրակի ուղղությունը։ Հունանը մի հայացք է գցում իր շուրջը, տեսնում է իր ընկերներից մի քանիսի արնաշաղախ դիակները, հավաքում վերջին ուժերը, վճռական ձայնով բացականչում՝ «Տղերք, ընկերներ, այլևս այս ԴԶՕՏ-ը չի գործելու։ Հրամայում եմ առաջ...» Ու ապա, առաջ նետվելով, իր մարմնով փակում է ԴԶՕՏ-ի հրակնատը և լռեցնում ղնդացիրը։ Օգտվելով կրակի դադարից, մարտիկները անմիջապես նետվում են առաջ և հաշիվ տեսնում թշնամու հետ։

Թշնամու ԴԶՕՏ-երի և նրանց անձնակազմի ոչնչացումը հնարավորություն է տալիս սովետական մարտիկներին՝ առաջ շարժվել և վերջնականապես տիրել բարձունքին։

Այսպիսով, Հունան Ավետիսյանը կրկնում է ռուս մեծ ժողովրդի անմահ դավակ Մատրոսովի օրինակը, իր կյանքի գնով կատարում մեծագույն սխրագործություն՝ հանուն մեր փառապանծ բանակի հաղթանակի։

Սեպտեմբերի 18-ին Վերխնե-Բականսկիի Խուտոր-Գայդուկ ավանում հողին են հանձնում Հունանի և մյուս զոհված հերոսների աճյունները։

Հունան Ավետիսյանը անմահանում է, նրա անունը ոսկեգծ տառերով գրվում է Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի պատմության տարեգրության մեջ։

Նույն օրը Հունան Ավետիսյանի փաստաթղթերի մեջ գտնվում է նրա ձեռագիր գիմումը, որտեղ գրված է. «Ծնվել եմ 1914 թվականին, Ղափանի շրջանի Ծավ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Մինչև ռազմաճակատ գալս աշխատում էի Հոկտեմբերյանի շրջանի Միկոյանի անվան սովխոզում, որպես բրիգադիր։ Կոմերիտական եմ։ Իմ ցանկությամբ այս գիշեր գնում եմ գրոհի։ Բարձունքը անպայման կվերցնեմ։ Թող հրամանատարությունը վստահ լինի դրան։

Ջերմորեն ցանկանում եմ լինել Լենինի—Ստալինի մեծ պարտիայի անդամ, այսուհետև կռվել որպես կոմունիստ և եթե հարկ լինի մեռնել որպես կոմունիստ» (էջ 58—59)։ Հունան Ավետիսյանը փառքով պսակեց իրեն՝ ընկավ որպես Լենինի—Ստալինի պարտիայի զինվոր, սովետական անձնուրաց հայրենասեր։

* * *

Գրքի երկրորդ բաժնում հեղինակը հանդամանորեն խոսում է հայ ժողովրդի դավակ, սովետական հայրենասեր Հունան Ավետիսյանի անմահ սխրագործությունը հավերժացնող փաստերի մասին, այն մասին, թե ինչպիսի հերոսական մարտական գործողություններով մասնակցեց հայկական միավորումը Հյուսիսային Կովկասը գերմանա-ֆաշիստական օկուպանտներից ազատագրելու համար մղված մարտերին և արժանացավ բարձր գնահատականի։

1943 թվականի հոկտեմբերի սկզբներին Սովետական Բանակի մյուս միավորումների հետ միասին, հայկական միավորումն էլ, հաղթականորեն ավարտելով Կովկասի և Թամանի համար մղած մարտերը, արժանանում է Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի շնորհակալությանը և «Թամանյան» պատվավոր կոչմանը։ Բազմաթիվ սպաներ և մարտիկներ պարգևատրվում են Սովետական Միության մարտական շքանշաններով և մեդալներով։

Ապրելով մեծ հաղթական ցնծության օրեր, թե՛ սպաները և թե՛ մարտիկները երբեք չեն մոռանում իրենց զոհված ընկերներին, որոնք իրենց մասն ունեցան այդ մարտերում ձեռք բերված հաղթանակների գործում։ Հունանի և մյուսների անուններն ու սխրագործությունները չեն մոռացվում։ Նրանք Հունան Ավետիսյանին անվանում են «Հայ Մատրոսով»։ Ճակատային մամուլը մի շարք հոդվածներ է նվիրում Հ. Ավետիսյանին, լայնորեն մասսայականացնելով նրա սխրագործությունը։

Հեղինակը տեղին մեջբերում է կատարում Հայաստանում սովետական կարգերի հաստատման 23-րդ տարեդարձի առթիվ Կ. Լ. Սաբոկինի գրած հոդվածից, որտեղ ասված է՝ «... Մեր հայրենիքի դալիք սերունդները սուրբ զգացմունքով միշտ կհիշեն հայկական Մատրոսովի ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի անմահ սխրագործությունը, որն իր մատաղ կյանքը գիտակցաբար զոհաբերեց հանուն Հայրենիքի ազատության ու պատվի։ Նա, իր մարմնով ծածկեց թշնամու ԴԶՕՏ-ի հրակնատը և ապահովեց իր ստորաբաժանման հարձակումն ու հաղթանակը» (էջ 63)։

Հունան Ավետիսյանի սակրավոր եղբայր՝ Հմայակը իր մի նամակում ասում է. «Եղբորս արյունը վրեժի է կանչում... արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ։ Ահա իմ նշանաբանը»։ Դեպի թշնամին լցված անսահման ատելությամբ, նա երդվում է ոչինչ չխնայել՝ հանուն հաղթանակի և իր երդումը կատարում է հետագա մարտերում։

Հրամանատարությունը Հունան Ավետիսյանին ներկայացնում է՝ հետմահու Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու համար։ ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի Նախագահության 1944 թվի մայիսի 16-ի հրամանագրով Հունան Ավետիսյանին շնորհվում է հետմահու Սովետական Միության Հերոսի կոչում։ Այդ կարևոր ակտով սովետական պետությունը հավերժացրեց հայ ժողովրդի պանծալի դավակի հիշատակը։

Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացվում է Կուբանի Վերխնե-Բականսկի ստանիցայի և Խուտոր-Դայդուկի աշխատավորների և շրջանային սովետի Գործկոմի կողմից, Դայդուկ ավանում Զավոդսկայա փողոցը անվանելով Հ. Ավետիսյանի անունով և նույն ավանում կանգնեցնելով նրա հուշարձանը։

ՍՍՌՄ Զինված Ուժերի Մինիստր մարշալ Վասիլևսկու 1949 թվականի ապրիլի 22-ի հրամանով Հ. Ավետիսյանի անունը առհավետ գրանցվում է հրաձգային գնդի առաջին վաշտի ցուցակում։ Մինիստրի այս հրամանը մեծ խանդավառություն է առաջ բերում մարտիկների շարքերում։ Վերև հիշված վաշտի զորանոցում կահավորվում է առանձին մահճակալ՝ հերոսի անկողնով։ Մահճակալի գլխավերևում փակցվում է հերոսի մեծադիր նկարը։ Ամեն օր երեկոյան շարային պարապմունքի ժամանակ մարտիկների ցուցակն ընթերցելիս առաջինը արտասանվում է Հունան Ավետիսյանի անունը, որի պատասխանը լսվում է խորությունից միջից –Սովետական Միության Հերոս ավագ սերժանտ Հունան Մատրոսի Ավետիսյանը լինկով Ռայի մահով մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար մղված մարտերում։ ՍՍՌՄ Զինված Ուժերի Մինիստրի հրամանը ստացվելուց հետո ստորաբաժանման կոմսոմոլի ժողովը մի սրտաբուխ նամակ է ընդունում ուղղված իրենց մարտական ընկեր, անմահ հերոսի մորը, որտեղ ասված է. «Մենք, սովետական ռազմիկներս, խորին շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, որ նման հայրենասեր, Լենինի–Ստալինի գործին հավատարիմ զավակ եք դաստիարակել։ Մենք խոսք ենք տալիս զինվորական ծառայությունը կատարել

այնպես, ինչպես Հունանը, Հայրենիքի թշնամիներին ատել այնպես, ինչպես Հունանը»։

Հեղինակը գրքում բերել է հերոսի մոր նամակը՝ ուղղված Անդրկովկասի զինվորական օկրուգի ռազմիկներին, որտեղ նա կոչ է անում մարտիկներին՝ ազնվորեն պաշտպանել սովետական ժողովրդի, Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ գեպի կոմունիզմ ընթացող ժողովրդի շահերը։ Նամակը տպագրվում է զինվորական թերթերում և մեծ արձագանք է գտնում Սովետական բանակի մարտիկների մեջ։ Այդ նամակին որպես պատասխան ստացվում են մի շարք նամակներ, ուղղված Հ. Ավետիսյանի մորը, որոնք ցույց են տալիս մեր բանակի մարտիկների սովետական վառ հայրենասիրությունը, նրանց նվիրվածությունը բոլշևիկների պարտիային, վճռականությունը՝ պաշտպանել հայրենիքը այնպիսի նվիրվածությամբ, անձնազոհությամբ, ինչպես պաշտպանում էին Գաստելոն, Մատրոսովը, Ավետիսյանը, Կոժեդուբը և հարյուր հազարավորները ռազմաճակատում՝ իրենց մարտական սխրագործություններով և միլիոնները թիկունքում՝ իրենց անձնուրաց սոցիալիստական աշխատանքով։

Գրքի երրորդ բաժնում հեղինակը տեղավորել է 14 փաստաթուղթ, զինվորական մամուլում հրապարակված հոդվածներ և ուրիշ նյութեր, որոնք նվիրված են Հունան Ավետիսյանին կամ կապված են նրա անմահ սխրագործության հետ։

Գրքում բերված կարևոր փաստաթղթերի թվին են պատկանում՝ Հունան Ավետիսյանին՝ միավորման հրամանատարության կողմից Սովետական Միության հերոսի կոչման ներկայացնելու վերաբերյալ թերթիկը, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրի քաղվածքը՝ Հունան Ավետիսյանին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին, ՍՍՌՄ Զինված ուժերի Մինիստր, Սովետական Միության մարշալ Վասիլևսկու 1949 թվականի ապրիլի 22-ի № 30 հրամանը՝ Հունան Ավետիսյանի անունը հրաձգային գնդի 1-ին հրաձգային վաշտի ցուցակում առհավետ գրանցելու մասին։ Հետաքրքրություն են ներկայացնում նաև «Կրասնայա գվեզդա»-ում տպված մայոր Ն. Սաֆարյանի հոդվածը և ուրիշներ։

Ընկ. Խալեյանի գիրքը հետաքրքիր, ընթերցող լայն մասսաների համար հասկանալի փաստերով հագեցված, միանդամայն օգտավետ և ողջունելի գործ է։

Իր գնահատելի արժանիքների ու դրական կողմերի հետ միասին գիրքը զերծ չէ նաև առանձին թերություններից։

Չնայած գրքի պատմական գիտա-պոպուլյար բնույթին, ցանկալի էր, որ հեղինակը նշեր մի շարք էջերում բերված չափազանց կարևոր, բնութագրական և հետաքրքիր խոսակցությունների ու հիշողությունների աղբյուրները, մանավանդ այն խոսակցություններին, որ տեղի են ունեցել Հունան Ավետիսյանի և իր պետերի, կամ նրա և իր մարտիկների միջև։

Մեզ թվում է, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակվող նման նյութերը, որոնք վերաբերում են Հայրենական պատերազմի պատմությանը, պետք է զերծ լինեն գեղարվեստական գործերին հատուկ զեղումներից։ Նրանք, անշուշտ, պետք է գրված լինեն պատկերավոր լեզվով, բայց վերարտադրեն պատմական փաստերը ճշգրտորեն, խստապահանջությամբ։ Այլ բան է, որ հետագայում այդ նյութերը կարող են հիմք դառնալ գեղարվեստական դրականության համար։

Օգտագործված մի շարք փաստաթղթերի աղբյուրները հիշատակվում են, սակայն հեղինակը միշտ չէ, որ ցուցարերում է հետևողականություն՝ աղբյուրները նշելու խնդրում (տես էջեր՝ 18, 19, 21, 31 և այլն)։

Գիրքն ավելի կշահեր, եթե Կովկասի ռազմաճակատի գործերի հարձակողական գործողություններն ավելի հանգամանորեն նկարագրվեր, որպես հիմնական ֆոն։

Գրքի առանձին էջերում կան ձգձգված նկարագրություններ և կրկնողություններ, որից հնարավոր էր խուսափել։ ԳԱ Հրատարակչությունը այդօրինակ բրոշյուրների հրապարակումով պետք է հետզհետե մասսայականացնի մեր ժողովրդի անմահ հերոս զավակների սխրագործությունները։ Ժողովուրդը պետք է լավ ճանաչի մեր Սովետական Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող մարտերում աչքի ընկած հերոսներին։

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ